



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՌԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆ**

☒ ՀՀ Լոռու մարզ, քաղ. Վանաձոր, Մ. Գոշի 6

☎(0322) 2-40-37

ԼԴ/0006/01/16, Ե 07 12156/16

« 30 » մայիսի 2016թ.

ՀՀ Լոռու մարզպետ,
պարոն՝ **Ա.Նալբանդյանին**
/Հասցե՝ քաղ. Վանաձոր, Հայրի հրապարակ/

Ուղարկվում է Նորայր Սարիբեկի Սարգսյանի վերաբերյալ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի թիվ ԼԴ/0006/01/16 քրեական գործով դատավճռի պատճեն:

Միաժամանակ հայտնվում է, որ Նորայր Սարիբեկի Սարգսյանը ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2016 թվականի ապրիլի 25-ի դատավճռով մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 38,311¹-րդ հոդվածի 1-ին մասով և 38,312¹-րդ հոդվածի 1-ին մասով:

ՀՀ քրեական օրենսգրքի 38,311¹-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտվել է տուգանքի Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200.000/երկու հարյուր հազար/ դրամի չափով:

ՀՀ քրեական օրենսգրքի 38,312¹-րդ հոդվածի 1-ին մասով դատապարտվել է տուգանքի Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200.000/երկու հարյուր հազար/ դրամի չափով:

ՀՀ քրեական օրենսգրքի 66 հոդվածի կարգով՝ պատիժները մասնակիորեն գումարելու սկզբունքով, ՀՀ քրեական օրենսգրքի 38,311¹-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված 200.000/երկու հարյուր հազար/ դրամի չափով տուգանքի ձևով պատժին մասնակիորեն գումարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 38,312¹-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված 200.000/երկու հարյուր հազար/ դրամ տուգանքից 100.000/մեկ հարյուր հազար/ դրամը և վերջնական պատիժ է սահմանվել տուգանք 300.000/երեք հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:

ՀՀ քրեական օրենսգրքի 51 հոդվածի 3-րդ մասի կարգով՝ տուգանքի վճարումը տարածառկելով և վճարման համար սահմանվել է 10 /տաս/ ամիս ժամանակ, յուրաքանչյուր ամիս բռնագանձելով 30.000 /երեսուն հազար/ ՀՀ դրամի չափով:

Խափանման միջոցը՝ ստորագրություն չհեռանալու մասին, թողնվել է անփոփոխ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:


Լոռու մարզի Դեբետ համայնքի համայնքապետարանի երկրորդ կարգի մասնագետ Նորայր Սարիբեկի Սարգսյանի պաշտոնավարությունը ժամանակավորապես դադարեցնելը վերացվել է:

Քրեական գործով վերաքննիչ բողոք չի ներկայացվել և դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ 2016թվականի մայիսի 26-ին:

Խնդրվում է հանձնարարել կատարել դատական ակտի պահանջները և արդյունքների մասին տեղյակ պահել դատարանին:

Դատավոր

Ս. Հարությունյան







Դ Ա Տ Ա Վ Ճ Ի Ռ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը հետևյալ կազմով՝

Նախագահող-դատավոր

Մ.Հարությունյան

Քարտուղար

Ռ.Թամարյան

Մեղադրող-դատախազ

Գ.Աջամյան

Ամբաստանյալ Գ.Գալստյանի շահերի պաշտպան

Կ.Թումանյան

Ամբաստանյալ Ն.Սարգսյանի շահերի պաշտպան

Վ.Սուրյան

Ամբաստանյալներ՝ Ա.Սարգսյանի, Պ.Մատինյանի, Ե.Կիրակոսյանի, Գ.Մատինյանի, Ա.Մանուկյանի, Լ.Հովսեփյանի, Ք.Խառատյանի, Ա.Ավետիքյանի շահերի պաշտպան

Ա.Սուրբիսյան

2016թ. ապրիլի 25-ին, Վանաձոր քաղաքում, դոնբաց դատական նիստում, արագացված դատական քննության կարգով քննեց գործն ըստ մեղադրանքի՝

Գարիկ Վռամի Գալստյանի՝ ծնված 1985 թվականի մարտի 18-ին, Ստեփանավան քաղաքում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, ամուսնացած, ինևանքին է գտնվում 21.09.2013թվականին ծնված տղան՝ Էրիկ Գարիկի Գալստյանը, չղատված, վատառողջ է, վերջինիս մոտ ախտորոշվել է պարբերական հիվանդություն, երրորդ խմբի հաշմանդամ, աշխատում է սոցիալական աջակցության Վանաձորի տարածքային բաժնում՝ որպես առաջատար մասնագետ, հասցեն՝ քաղաք Վանաձոր, Դպրոցի 52/2, 2015թվականի նոյեմբերի 26-ից մինչև 2015թվականի նոյեմբերի 29-ը գտնվել է արգելանքի տակ, մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 311¹-րդ հոդվածի 1-ին մասով,

Նորայր Սարիբեկի Սարգսյանի՝ ծնված 1966թվականի հունվարի 03-ին, Լոռու մարզի Դեբետ գյուղում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, միջնակարգ կրթությամբ, ամուսնացած, աշխատում է Լոռու մարզի Դեբետ համայնքի գյուղապետարանում՝ որպես երկրորդ կարգի մասնագետ, ԵԿՄ անդամ է, չղատված, հասցեն՝ Լոռու մարզ, գյուղ Դեբետ, 9-րդ փողոց, տուն 16, խափանման միջոց է ընտրվել „Ստորագրություն չհեռանալու մասին“, մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 38,311¹-րդ հոդվածի 1-ին մասով և 38,312¹-րդ հոդվածի 1-ին մասով,

Արմինե Վաչագանի Սարգսյանի՝ ծնված 1985թվականի հունվարի 06-ին, Ստեփանավան քաղաքում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, ութամյա կրթությամբ, ամուսնացած, ինևանքին՝ 22.05.2009թ. ծնված տղան՝ Ռոման Ռաֆայելի Գուլյանը, չի աշխատում, չղատված, հասցեն՝ Լոռու մարզ գյուղ Դեբետ, 2-րդ փողոց, 3-րդ նրբանցք, տուն 3, խափանման միջոց է ընտրվել „Ստորագրություն չհեռանալու մասին“, մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 312¹-րդ հոդվածի 1-ին մասով,

Պարույր Ռուբենի Մատինյանի՝ ծնված 1979 թվականի նոյեմբերի 24-ին, Լոռու մարզի Դեբետ գյուղում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, միջնակարգ կրթությամբ, ամուսնացած, ինևանքին երկու տղաները՝ 22.02.2005թ. ծնված Սևակ Պարույրի Մատինյանը և 19.02.2008թ. ծնված Նարեկ Պարույրի Մատինյանը, չի աշխատում, չղատված, հասցեն՝ Լոռու մարզ, գյուղ



Դեբետ, խափանման միջոց է ընտրվել „Ստորագրություն չհեռանալու մասին”, մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 312¹-րդ հոդվածի 1-ին մասով,

Երևն Արարատի Կիրակոսյանի՝ ծնված 1974 թվականի նոյեմբերի 25-ին, Վանաձոր քաղաքում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, միջնակարգ կրթությամբ, ամուսնացած, խնամքին՝ 25.11.1998թ. ծնված աղջիկը՝ Մելինե Երեմի Կիրակոսյանը և 08.06.2001թ. ծնված տղան՝ Արարատ Երեմի Կիրակոսյանը, չի աշխատում, չդատված, հասցեն՝ Լոռու մարզ գյուղ Դեբետ, 6-րդ փողոց, տուն 25, խափանման միջոց է ընտրվել „Ստորագրություն չհեռանալու մասին”, մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 312¹-րդ հոդվածի 1-ին մասով,

Գևորգ Գառնիկի Մատինյանի՝ ծնված 1973 թվականի հունվարի 30-ին, Լոռու մարզի Դեբետ գյուղում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, միջնակարգ կրթությամբ, ամուսնացած, խնամքին երկու տղաները՝ 30.09.1998թ. ծնված Նվեր Գևորգի Մատինյանը և 08.01.2001թ. ծնված Գառնիկ Գևորգի Մատինյանը, չի աշխատում, չդատված, հասցեն՝ Լոռու մարզ, գյուղ Դեբետ, խափանման միջոց է ընտրվել „Ստորագրություն չհեռանալու մասին”, մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 312¹-րդ հոդվածի 1-ին մասով,

Ադունիկ Վաղինակի Մանուկյանի՝ ծնված 1938 թվականի հոկտեմբերի 15-ին, Լոռու մարզի Եղեգնուտ գյուղում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, 7-ամյա կրթությամբ, այրի, չի աշխատում, վատառողջ է՝ գերձայնային ախտորոշումով խորհուրդ է տրվել դինամիկ հսկողություն, չդատված, հասցեն՝ Լոռու մարզ, գյուղ Դեբետ, խափանման միջոց է ընտրվել „Ստորագրություն չհեռանալու մասին”, մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 312¹-րդ հոդվածի 1-ին մասով,

Լյուդմիլա Սարգսի Հովսեփյանի՝ ծնված 1974 թվականի սեպտեմբերի 19-ին, Լոռու մարզի Դսեղ գյուղում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, միջնակարգ կրթությամբ, ամուսնացած, խնամքին՝ 18.08.2000թ. ծնված աղջիկը՝ Սիրանուշ Կորյունի Նազուխանյանը, չի աշխատում, չդատված, հասցեն՝ Լոռու մարզ, գյուղ Դեբետ, 6-րդ փողոց, 38 տուն, խափանման միջոց է ընտրվել „Ստորագրություն չհեռանալու մասին”, մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 312¹-րդ հոդվածի 1-ին մասով,

Քնրուշ Սերյոժայի Խառատյանի՝ ծնված 1962 թվականի հունվարի 03-ին, Լոռու մարզի Դսեղ գյուղում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, միջնակարգ կրթությամբ, ամուսնացած, չի աշխատում, չդատված, հասցեն՝ Լոռու մարզ գյուղ, Դեբետ 5-րդ փողոց, տուն 31, խափանման միջոց է ընտրվել „Ստորագրություն չհեռանալու մասին”, մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 312¹-րդ հոդվածի 1-ին մասով,

Ալինա Ժիրիկի Ավետիսյանի՝ ծնված 1979 թվականի հունվարի 30-ին, Վանաձոր քաղաքում, ազգությամբ հայ, ՀՀ քաղաքացի, միջնակարգ կրթությամբ, ամուսնացած, խնամքին՝ 04.03.2002թ. ծնված տղան՝ Սեյրան Հովիկի Կիրակոսյանը և 02.06.2005թ. ծնված աղջիկը՝ Սյուզի Հովիկի Կիրակոսյանը, չի աշխատում, չդատված, հասցեն՝ Լոռու մարզ, գյուղ Դեբետ 5-րդ փողոց, 23 տուն, խափանման միջոց է ընտրվել „Ստորագրություն չհեռանալու մասին”, մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 312¹-րդ հոդվածի 1-ին մասով,

Գործով ձեռք բերված ապացույցներով պարզվել է հետևյալը.

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ Տ.Թադևոսյանն ուսումնասիրելով Արմեն Սարգսյանի և Նորայր Սարգսյանի հաղորդումների վերաբերյալ նախապատրաստված նյութերը, 2015 թվականի նոյեմբերի 25-ին որոշում է կայացրել պաշտոնեական կեղծիք կատարելու և Վանաձորի սոցիալական ծախսության պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայողի կողմից զգալի չափերով անօրինի վարձատրություն ստանալու դեպքի առթիվ հարուցել քրեական գործ՝ ՀՀ քրեական

